

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Անգամ՝ գրադարան ...

Ի. ՏԵՐ-ՆԵՐՍԻՆՅԱՆ

ԳՅՈՒՐԿԱԿԱՐԱՎՈՐՈՒՄ - 7

ԽՆՉՈՐԵՆՈՒ ՎՆԱՊԱՏՈՒՆԵՐԸ

ՅԵՎ.

ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ
Խ. ՅԵՐԻՑՑՈ. ՆԻ

8 6 1 0 4. 0. 7
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Հ. 4. 4. 4. ԿՈՄԻՏԵՅԻ
1 9 2 4

**ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԱՄԱՐ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ
ԼՈՒՀՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ**

1. Խ. Տեր. Ավագյան - Մեղքի փոտիստ հիվանդությունը:
2. Կ. Մելիք-Շահնազարյան - Մոռկը և նրա դեմ կովելու միջոցները:
3. Կ. Մելիք-Շահնազարյան - Մոռեխը և նրա դեմ կովելու միջոցները:
4. Պրոֆ. Կոստիչև - Հողի մշակությունը:
5. Մ. Դլուխով - Կանաչ պարարտացում:
6. Ե. Ի. Արթուր - Կերի արմատապտուղների մշակությունը,
7. Խ. Յերիցյան - Կաթնատնտեսության համառոտ ձեռնարկ:

ՊԱՏՐԱՍՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Գ. Գրձելյան - Վաղի հիվանդությունը:
2. Գ. Քալանթարյան - Բակտերիաները և նրանց դերը գյուղատնտեսության մեջ:
3. Գ. Քալանթարյան - Գոմախը:
4. Խ. Յերիցյան - Կթի կովի կերակրելը:

ՄԱՃԱԿ-ԴՐԱԴԱՐԱՆ

630
134-ՏԸ

Ի. ՏԵՐ-ՆԵՐՍԻՅԱՆ

ԽՆՉՈՐԵՆՈՒ ՎՆԱՄԱՏՈՒՆԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ՂԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

10859
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԽՈՎՀՈՎԻ
Խ. ՏԵՐԻՑՅԱՆԻ

ՅԵՎ ՅԵՎ
ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵՅԻ
1924

089
72-1481

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Տպագրված և Հայաստանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հատուկ հաճախաժողովի հավանությամբ:

Պաղատու ծառերի թշնամիները չափազանց շատ են: Միայն խնձորենու վրա կարելի յե գտնել մոտ 10-12 մեծ և փոքր տեսակի միջատներ, վորոնք տարեցտարի ահազին վնասներ են հասցնում մեր այգիներին: Ապրելով և իրենց կյանքը մեծ մասամբ անցկացնելով ծառի վրա՝ նրանցից մի քանիսները վնասում են գլխավորապես տերեներին, մյուսները պտուղներին, իսկ վուանք ծառի բուննու ճյուղերին: Այդ վնասատուներից ամեն մեկը իրեն չափով վտանգավոր ե խնձորենու համար: Կրծելով տերեները և հաճախ բոլորովին տերենագուրկ անելով ծառը, նրանք զրկում են ծառը ողից սնունդ ստանալու հնարավորթյունից և այդպիսով թուլացնում, նվազանում են ծառը, իսկ յեթե չարիքը կրկնվում ե մի քանի տարի շարունակ, ծառը բոլորովին ուժապառ ե լինում, չորսնում ե, կամ յեթե չի չորանում՝ զ կվում ե բերք տալու ընդունակությունից, բոլորովին անպետքանում ե: Պտուղների վրա բնակվելով, վնասատուները կամ վոշնչացնում են պտուղը ծառի հենց ծաղկման ժամանակ, չթողնելով, վոր պտուղը գոյանա, կամ թե չե խորանալով պտղի մեջ՝ ուտում են պտղի ներսը և անպետք դարձնում նրան:

Բնակվելով ծառի բնի կամ ճյուղերի վրա, վնասատու միջատները փչացնում են ծառի վոչ միայն կեղել, այլև նրա փայտը. կրծելում և փչացնում են ծառի միջի հյութատար խողովակները, (վորոնցով շարժվում են հողից և ողից փերցրած հյութերը) և այդպիսով զրկում

Է

թե բողբոշները, թե տերեները և թե պտուղները նրանց զարգացման համար անհրաժեշտ սննդառու նյութերից:

Այսպիսով բոլոր ֆսասառու միջամներն այնքան վտանգավոր են ծառերի համար, վոր աչքաթող անելլ և սրանց դեմ չկովելը միևնույն է, թե գիտակցաբար ծառը վոչնչացնել:

Չարիքն ավելի մեծ չափեր ե ստանում, յերբ այգեգործությամբ զբաղվող ազգաբնակությունն անձանոթ ե լինում ֆսասառուների և նրանց դեմ կովելու միջոցների հետ և բերքի վոչնչացումը հաճախ վերագրում ե առտվածային պատժի կամ վորհե անհայտ պատճառի:

Մինչդեռ թշնամին ծնվում և մեծանում ե ծառի վրա, հենց մեր քթի տակ և նրա դեմն առնելու միջոցներն այնքան հասարակ են, վոր ամեն մեկը հեշտությամբ կարող ե չարիքը վոչնչացնել հենց սկիզբից, յեթե ցանկություն ունենա և ուշի ուշով հետեւի իր այգուն Յերկու հանգամանք միայն հարկավոր ե աչքի առաջ ունենալ: Ամենից առաջ պիտի իմանալ հասցրած ֆսասի պատճառը, այսինքն ճանաչել այն թշնամուն, վոր ծառին այս կամ այն ֆսասն ե հասցնում, և առաջ իմանալով պատճառը, առանց հետաձգելու ձեռք առնել այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են չարիքը բնի մեջ խեղուելու: Հակառակ դեպքում մեր պտղառու այգիների բերքը շարունակ պակաս կլինի և այգեգործը տուրեցարի միայն ֆսամներ կստանա, ինչպես այդ տեղի ունի սեր այգեգործական շրջաններում:

Այգեգործներին ոգնության գալու նպատակն է, վոր մենք կանգ ենք առնում այստեղ ինձորենու ֆսասառուների վրա, նկարագրելով նրանցից գլխավորներին, վորոնք ամենից շատ տարածված են մեր յերկը ու առաջարկում են հանք մի շարք վործված միջոցներ, վորոնցով կարելի յե մեծ չափերով պակասացնել այն խոշոր ֆսասները, վորոնց յենթարկվում են շարունակ մեր ինձորենու ծառերը և այգետերերը:

1. ԽՆՁՈՐԵՆՈՒ ՑԵՑԸ ԿԱՄ ԹԻԹԵՌԸ


Ո՞վ չե տեսել խնձորենու ցեցը, կամ թրթուռը, ինչպես սովորաբար անվանում են նրան, այն փոքրիկ գեղնավուն վորդուկները, վորոնք սարդի նման փառ կամ փստայն են կապում խնձորենու տերեների շուրջը, տասնյակներով նստած են լինում բարակ թելիկներից պատրաստված այդ բնում և կրծում, վոչնչացնում են տերեները: (Տեսնկ. 1)



Նկ. 1. ԽՆՁՈՐԵՆՈՒ ՑԵՑԻ բաւը

Հինում են տարիներ, յերբ ցեցն այսքան է բազմանում, վոր բոլորովին վոչնչացնելով ծառի տերեները՝ անցնում ե պտուղներին, կապում ե վերջինները փառով և ահազին ավերումներ առաջացնում խնձորենու վրա: Այս բոլորին ծանոթ վորդը կարծես հանկարծակի յերեսում և մեր այգիները տարիներ շարունակ նրանցից ազատվել չեն կարողանում:

Իսքը ցեցը փոքրիկ թիթեռ է, հազիվ 10 միլիմետր



(Տես նկար № 2)

Հասունացած ցեցի թիթեռը չեզ նոր գարակված տերեվները, յերկարությամբ, յերկու զույգ թերուվ, վորոնցից վերսկի զույգը լինում ե սպիտակ, յերեք շարք սև կետով, տակի թերը մոխրագույն են և ավելի փոքր: (Տես նկ. 2.) Այս թիթեռը մեզանում յերեսում ե հունիսի ըսկըցից սկսած, սկզբում շատ քիչ և աչքի ընկնում, վորովհետև թագնված ե լինում այգիների խոտերի մեջ, իսկ հետո բեղմնավորվելով ահազին քանակությամբ թռչոտում են խնձորենիների վրա թե գիշերները և թե ցերեկով: Այդ ժամանակամիջոցում եզերը բեղմնավորվում են, վորից հետո իրենց համայա անշմարելի ձվիկներն ածում են ծառի ճյուղերի վրա 20-40 հատ միատեղ, վորի համար ընտրում են ծառերի բարակ ճյուղերի ծայրերը, ուր տեղավորված են լինում բողբջները, և վերեկց ծածկում են ձվերը հատուկ դեղին հյութով, վորը մի առժամանակից հետո ստանում ե ծառի ճյուղի դույնը և

անտեսանելի յե դառնում: Այդ բարակ ծածկոցի տակ ձվիկներից դուրս են գալիս մանրիկ վորդերը և մուռ են աշնան և ձմբան ընթացքում անշարժ մինչև դարուն, մինչև վոր ծառերը արձակում են իրենց տերեները: Հենց վոր նոր տերեները յերեսում են, վորդուկները դուրս են գալիս ծածկոցի տակից և մտնում թարմ տերեների մեջ նրանց կլեպի տակը: Հենց այդ ժամանակ ել կարելի յե բացվող բողբջի առաջին տերեկի ծայրին տեսնել սեացած կետ, վորը քանի զնում ավելի մեծանում ե և ծածկում ամբողջ տերերը: Սա հետևանք ե նոր դուրս յեկած վորդուկների գործունեյության: Յերկու շաբթից հետո սրանք դուրս են գալիտ կլեպի տակից և վոչնչացնելով մեկ տերեկ՝ անցնում են մյուսին և կամաց կամաց մեծանում ու պարզ տեսանելի յեն դառնում: Մոտ յերկու շաբթ այդպես տերեները կը ծոտելուց հետո վորդերը բավական մեծանում են և իրենց վոստախով պատելով ճյուղի ծայրը սկսում են ուղղակի լափել և տերեների փափուկ մասերը, թողնելով նրանց յերակները (դամարները) միայն (տես նկ. 1):


Շատ անգամ վորդերն այնքան են բազմանում, վոր լափելով ծառի ամբողջ տերեները և այլքս կերակուր չունեսալով սկսում են խոցել պտուղները: Այս բանը կարելի յեր տեսանել 1922 թվին Յերևանի այգիներում, ուր ցեցը անորինակ չափերի հասնելով վնասում եր վոչ միայն խնձորենուն, այլ և անպետքացնում եր նրա ողբանուները:

Ցեցի վոստախը շատ լավ պաշտպանում ե վորդերին անձրեներից: Վոստախնի թելիկներն այնքան խիտ են լինում հյուսված, վոր անձրեի կաթիները ներս չեն անցնում, իսկ վորդերը վոստախնի մեջ կծկվելով պաշտպանվում են թե անձրեի կաթիներից և թե ցրտից: Նրանք իրար կպչելով կարծես տաքացնում են միմյանց:

Այս հանգամանքը շատ կարեսը և նկատի ունենալ

և կռվի միջոցներ ցեցի դեմ ձեռք առնել նրանց զարգացման հենց սկզբից, յերբ նրանք շատ փոքր և քնքուշ են և վոստայնով դեռ չեն պաշտպանված այնպես, ինչպես մեծացած ժամանակ:

Հունիսի սկիզբներին, իսկ լեռնային շրջաններում հունիսի կեսերին վորդերը հասունանում են և կամ իրենց բների մեջ, կամ ծառի ճյուղերի ու կեղևի բացվածքներում կազմում են հարսնյակ, նորից խմբերով **15-20** վորդը միտոսին:



Նկար 3. Խնձորենու ցեցը հարսնյակ (Կոկոն) կազմած:

Հարսնյակները բարակ, յերկար ձև ունեն և շրջապատված են թափանցիկ սպիտակավուն թելերից հյուսած թաղանթով. Այդ դրության մեջ ցեցը մնում է 2-3 շաբաթ, վորից հետո դուրս են գալիս թիթեռնիկները, վորոնք արդեն փոչ մի մաս հասցնել չեն կարող, այլ միայն բեղմնավորվելով նորից ձու յեն ածում հետեւալ տարին ավելածություններ կատարելու համար:

Խնձորենու ցեցի հասցրած միաը պատճառու ալգիներին չափազանց մեծ է: Շատ բազմանալով նրանք բոլորովին վոչնչացնում են բերքը և զրկում այգետիրոջ յեկամտից: Այդ բավական չե. մի անգամ վարակելով ծառը և ճյուղերը փաթաթելով իրենց վոստայնի խիտ

թելիկներով, այլևս գժվար և լինում ազատվել նրանցից՝ ուստի կոփվը այդ վնասատնտի դեմ պետք ե լինի անհնա և ինչքան հսարավոր ե նրա յերեալուն պես՝ առանց հետաձգելու:

Սակայն ինչ միջոցներով ե հարկավոր կովել նրանց դեմ:

Ամենից հիմնական միջոցը նրանց թունավորելն ե և վորովիետն վորդերը չափազանց անողնական են իրենց փոքր հասակում և դեռ չեն պաշտպանված վոստայնով այնպես, ինչպես մեծացած ժամանակ, ուստի թունավորել պետք ե հենց վոր յերեւում են նրանք: Այդ նպատակին հասնել կարելի յե մի թունով, վոր կոչվում ե փարիզյան կանաչը կանաչագույն մի փոշի յե, վորը կարելի յե ձեռք բերել թե չայասսանի հողժողկոմատի պահեստում և թե գավառական հողբաժիններում և զործածել հետեւալ ձեռվի:

Գարնան սկզբում, յերբ գեռ նոր են առաջանում տերեները (ծառը ծաղկելուց առաջ), առանց սպասելու, վոր վորդերը յերեան, ծառը պիտի սրսկել փարիզյան կանաչով առաջին անգամ, իսկ ծաղկիկները թափելուց յետո անզայման յերկրորդ անգամ: Սրսկել պետք ե վերմորելի ապարատով, (տեսնկ. № 4) իսկ այստեղ, ուր վորեկ պատճառով անհնարին և ապարատ ձեռք բերել, կարելի յե սովորական ավելիներով: Բայց լավ ե անպատճառ սրսկել ապարատով, վորովիետն նրանով տերեները ավելի լավ և հավասար են թաթախվում դեղով: Դեղը պատրաստում են այսպես.՝ ամեն մի վեդրո ջրին վերցնում են 2—4 մսխալ փարիզյան կանաչ և վորովին տես կանաչը ջրի մեջ չի լուծվում, պետք ե նրան առաջ լուծել կես բաժակ ամսոնյակ կոչված հեղուկի մեջ կամ թե չե սովորական սպիրտի, կամ թունդ ողու մեջ, ապա լուծվածքը լցնել մեկ վեդրո ջրի մեջ: Յեթե ամմոնյակ,

սպիրտ կամ թունդ ողի չի ճարվում, կարելի յէ կանաչը խառնել ուղղակի ջրի հետ, բայց այս գեղքում սրսկելու ժամանակ պետք ե ապարատը մեջրին շալակելուց հետո շարունակ մեջքով շարժումներ անել, վորպեսզի փարիզյան կանաչը ապարատի տակը չնստի և ջրի մեջ հավասար կերպով խառնված մնա: Բացի կանաչից պիտի ամեն մի վեղքոյին ավելացնել (նախորոք քիչ ջրի մեջ լուծելով) 6—8 մսխալ թարմ և չհանգցրած կիր: Այսպես պատրաստած հեղուկը պետք ե լավ խառնել և ապա լցնել Վերմորելի ապարատի մեջ, վորից հետո կարելի յէ սրսկել ծառը: Մրսկումը պետք ե լավ կատարել, վորպեսզի հեղուկով թաթախվեն բոլոր տերեները, մանավանդ ծառի ճյուղերի ծալը բրինը: Մինչև ծաղկելը պետք ե սըս-



Նկ. 4. Վերմորելի ապարատ

կել ավելի թույլ հեղուկով, վերցնելով ամեն մի վեղքով ջրին 2—3 մսխալ փարիզյան կանաչ, թե չե թարմ տերեները կարող են թույնից մնասվել: Ծաղկման շրջանին ոնցնելուց հետո, յերկրորդ սրսկումը կատարելիս կարե-

լի յէ վերցնել 4 մսխալ փարիզյան կանաչ, Վորդերը կրծելով թույնավորված սերեվինը կոտորվում էն: Յեթե սկզբում չկատարենք, այլ ուշացնենք, գեղը իր նպատակին չի հասնի, վորովհետև ինչպիս տեսանք ցեցի վոստայնը թույլ չի տալիս, վոր ջրի կաթիները վոստայնի ներսն անցնեն:

Չատ անգամ սրսկումները իրենց նոլատակին չեն հասնում, վորովհետև գարնանը լինում են հաճախ անձրեներ, վորոնք սրսկելուց հետո լվանում են գեղը տերեներից: Այդ գեղքում պետք ե անձրել վերջանալուց և տերեները չորանալուց հետո նորից սրսկել:

Յեթե վորեն պատճառով արգեգործը հնարավորություն չի ունեցել սրսկումը իր ժամանակին կատարելու, կամ անձրեները խանգարել են, այն ժամանակ պետք ե ոգտվել վորդերի մի հատկությունից: Վորդերը փոքրիշատե մեծացած ժամանակ շատ վախկոտ են լինում և ճյուղերի թեթև շարժումից պոկվում են բնից և թելիկների վրա կախվելով իջնում են ցած: Այս հանգայանքից պետք ե ոգտվել և ժողովելով վորդերը, վոչնչացնել նրանց:


Հարսնակ դարձած ժամանակ ևս շատ հեշտ է ժողովել և վոչնչացնել՝ նրանց: Կարելի յէ գործածել հետեւյալ միջոցը: Պետք ե վերցնել մի վորեւ փաքրիկ ճրագ, լցնել բենզինով կամ նավթով և ճրագը վառելով, ամրացնել յերկար ձողի վրա ու ճրագի կրակով մեկ մեկ այրել բները:

Պետք է հիշել մի բան, վոր յերե կոմի միջոցներն իր ժամանակին ձեռք չեն առնվազում, կոխվը նետ ավելի դժվարանում է:

2. ԽՆՁՈՐԵՆՈՒ ՄԱՂԱԿԵՐԸ

Յենց անունից յերեւում ե, վոր այս վասատուն փր-

չացնում և խնձորենու ծաղիկները. Սա մի շատ պստիկ բգեղ է.




Նկ. 5. Խճճորենու ծաղկակերը (մեծացրած):

ա.—բղեղը, բ.—վորդը, (թրթուռը), գ.—խնձորենու ծաղիկը վնասված բղեղի եղի կողմից, դ.—հարսնյակ:

Կնճիթի ծայրին տեղափորված են նրա բերանը իր կրծող ժանիքներով. Մարմի մեծությունը 2 միլիմետրից ավելի չե: Ունի յերկու անկյունավոր բեղիկներ, վորոնք շոշափուկներ են կոչվում (տես նկար 5). Վորդը մի քիչ ավելի մեծ ե՝ մոտ 3 միլիմետր և ամբողջապես բաց դեղին գույն ունի, բացի զլիսից, վոր սև ե: Այս բղեղը յերեսում ե ամեն տեղ, ուր զարգացած ե այգեգործությունը. Մեզանում չափազանց տարածված ե թե լեռնային և թե դաշտային շրջաններում: Զմեռը անց ե կացնում զանազան պտղատու ծառերի (մեծ մասամբ խնձորենիների) բնի և ճյուղերի կեղեւի ճեղքվածքներում, գետնի վրա թափված տերենների տակ և այն մասուների մեջ, վորոնցով շատ անգամ պատած են ինում մեր պտղատու ծառերի բները:

Խճճորենու ծաղկակերի բղեղը յերևան և գալիս միշտ դարնան սկզբներում, յերբ ծաղկի կոկոնները դեռ չեն բացված: Եզր իր սուր կնճիթով ծակում ե գեռ չբացված խնձորենու ծաղկաթերթիկը ու փչացնելով կոկոնները՝ ածում ե իր ձուն հենց ծաղկաբանի մեջ (տես

նկ. 5-դ), ուր տեղափորված են առեջքները և վարսանդը, ծաղկի այն մասերը, վորոնց շնորհիվ գոյանում ե պատռղը: Զուն դնելուց մոտավորապես 7-10 որ հետո գուրս ե գալիս փոքրիկ վորդը, վորը սկսում է կրծել և փոչնչացնել վարսանդը և առեջքները (տես նկ. 6):



Նկ. 6. Խճճորենու ծաղիկը

ա.—վարսանդներ, բ.—առեջքներ:

Այն կոկոնները, վորտեղ ծաղկակերը ձու յե ածել և վորդը փչացը և ծաղկի միջի մասերը, այլևս չեն բացվում, ծաղկաթերթիկները կարմրավուն գույն են ստանում և ծաղկիկը չորանալով ընկնում ե: Զորացած, չբացված ու կարմրավուն գույն ստացած այդ կոկոնները նշան են, վոր ծաղկակերը սկսել ե իր ավերածությունը:

Բավական ե այդպիսի ծաղիկը վերցնել, բացել կուշ յեկած ու զեղնաց թերթիկները և կարելի ե տեսնել ներսում գեղին վորդուկը, առանց, վոաքերի վորոնց կարիքը իսկի ել չունի:

Ընդամենը 3 շաբաթվա լնթացքում վորդուկը հասունանում է և հարսնյակ կազմում նույն տեղում:

8-10 որից հետո գուրս ե գալիս բղեղը, վորը արդեն անվնաս և ծառի համար:

Նույն այս վնասատուն հանդիպում ե և տանձենու վրա, բայց ավելի քիչ: Զնշին մեծություն ունենալով ինձորենու ծաղկակերը ահագին վնասներ ե հասցնում այդեզործության: 1922 թվի գարնան մենք առիթ ենք ունեցել դիտելու մեր այդիները՝ սկսած Լոռվա սահմանաբերից գետի Իջևան, Դիլիջան և մինչև Յերևան, և առեն տեղ նկատել ենք այս վնասատուի անորինակ տարածումը: Մեր հաշվով այդ վնասատուն վոչնչացրել ե 1922 թվին ինձորի բերքի առնվազն 70 տոկոսը, և ցավալին այն է, վոր շատ է դիտելու դիմության մասին յեվ վնասը վերագրում ելին ցըտահարության: Նույնը կարեմ յեր տեսնել Յերևանի այդիներում և 1923 թվին:

Պետք ե աչքի առաջ ունենալ, զոր ծաղկակերի բզեզը խիս վախկոտ ե: Բավական ե ծառի ճյուղին թեթեվ դիպչել, զոր նա կծկվելով, իսկույն ծառից գետին ընկնի: Իզեզների այս հատկությունից ողափում են նրանց դեմ կովելու համար: Այդ նպատակով ծառի տակ փռում են զորեւ սպիտակ շոր (սավան) և ծոռի ճյուղերին մի քանի թեթև հարվածներ տալուց սավանի վրա յեն թափակում բզեզները, զորից հետո ժողովելով կարելի յե նրանց վոչնչացնել: Բայց այս ճնով կարելի յե վոչնչացնել բզեզների մի մասը միայն, այն ել այն ժամանակ, յերբ վնասը արդեն հասցը ված ե ծառերին: Պետք ե աշխատել Արտակի տուաջն առևելի միջնորդական մասը միայն մասը մասնաւում առաջարկ կարող է լինել, զորի շնորհիվ բզեզների հասցը վնասը պակասում ե: Պետք ե ժողովել հսարավորության շափ նաև վարակված ծաղկաբուժություները և այրել:

3. ԽՆՉՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐԸ

Ով այդի ունեցել ե, կամ գարնանից սկսած այգում ապրած ե, տեսած կլինի, զոր խնձորենու պտուղները գոյանալուց 2—3 շաբաթ հետո պտուղները շատ անդամ սկսում են զորինի: Շատերը կարծում են, թե այդ վորդը, զոր բուն ե դնում պտղի մեջ, առաջ ե գալիս հենց իրեն պտղի միջից, շատերն ել այդ բանը որենք են համարում և կարծում են, զոր խընձորը չի կարող չվորդնել: Բայց շատ շատերը նկատած կլինեն, զոր սկզբում վորդնամ պտուղների թիվը լինում ե քիչ, իսկ հետո քանի գնում ավելի շատանում ե:

Բանն ինչ չէ՞ն ե:

Վորդնամ խնձորը դժվար չե ճանաչել խնձորի կեղեկ

ծածկում ե ծաղկաբորբոջներն ամեն կողմից և բզեզն այլև չի կարողանում իր կնձիթով ծակել ծաղկաթերթիկը:

Վորովինեան բզեզը ձմեռն անց ե կացնում ծառերի ճեղքերում, մամուռ բների վրա և այլն, պետք ե աւելան լավ մաքրել ծառերի բներն ու հաստ նյուդերը յեվ քանձն կրացուր բանի բերին: Այս ճեռվ բոլոր ճեղքվածքները լըքցվում են և բզեզը ձմեռելու տեղ չունենալով, սատկում ե: Լավ ե ժողովել աշնան տերենները, կույտեր կազմել և վառել, վ բովինեան բզեզը անց ե կացնում ձմեռը նաև թափած տերենների մեջ: Այրել անհրաժեշտ ե և ծառի ճյուղերի և բնի կեղեկի պոկած մասերը: Անհրաժեշտ ե աշնանն անպայման փորել բահերով ծառերի տակը: Դրանով կվոչնչանան ամեն տեսակի բուլսերը, զորմաց վրա ձմեռում են այդ վնասատուները: Աշնան փորելն ունի և այն մեծ նշանակությունը, զոր գարնանը ծառերի ծաղկման շրջանը կարճ ե լինում, զորի շնորհիվ բզեզների հասցը վնասը պակասում ե: Պետք ե ժողովել հսարավորության շափ նաև վարակված ծաղկաբուժություները և այրել:

Վրայի այն՝ փոքրիկ ծակից, վորտեղ լինում է մուգ գեղավուն կամ կարմիր կեխտի փոքրիկ կույտ։ Դա վորդի ախտոտություններն են, վոր դուրս ե հանել նա, լավելով խնձորը։ Յեթե այդպիսի խնձորը կիսենք, կտեսնենք մեջք նստած սպիտակ փոքրիկ վորդուկը, վորը շատ է սիրում ուտել խնձորի միջի սերմերը և դրա համար ել միշտ խորանում ե պաղի սեղանը։ (տես նկ. 7)

Վորտեղից ե հանկարծ առաջ գալիս այդ վորդը։


Սու մի սեվավուն թիթեռի վորդ ե։

Թիթեռն ունի բարակ յերկարավուն մարմին, շատ փոքրիկ զլուխ և յերկու յերկար բեղիկներ։ Հանդիսան նստած ժամանակ թիթեռը նեղ թեզելը ծալում է տանիքի նման (յերկու կողմից թեք) և ունի 10-12 միլիմետր յերկարություն։ Թռչկոտում է միայն գիշերները ծառից ծառ և ճյուղից ճյուղ, իսկ ցերեկները թագնըլած ե լինում տերևների մեջ կամ ծառի բնի մեղքերում, իսկ շատ անգամ հենց բնի վրա, և վորովհետև թիթեռի մարմինը և թերթը լինում են նույն գույնի, ինչ գույնի կեղեն ե՝ միշտ ել աննկատելի յե մնում։


Այս թիթեռն ե, վոր խնձորենու ծաղկելուց և փոքրիկ խնձորները ծառի վրա գոյանալուց հետո գիշերները թռչկոտում ե պաղից պտուղ և 1-2 ձու յե ածում մեծ մասամբ պտուղների ծայրերին։ Թիթեռի եզր կարող է ածել 30-50 ձու և վորովհետև թիթեռներ շատ են լինում, պարզ ե, թե ինչու մեր այգիներում համարյա տուղջ պտուղ չի լինում։

Ածած ձվերից 8-10 որից հետո դուրս են գալիս փոքրիկ և սպիտակ վորդուկները։ Նրանք այնքան փոքր են լինում, վոր դժվարությամբ կարելի յե տեսնել, վորդուկները կրծելով խնձորի կեղեր (կլեպը)՝ կամաց կամաց խորանում են պտղիներուց։ Վօրդերի ձվերից դուրս գալու ժամանակը սկսվում է պտուղների գոյանալուց

12-15 որ հետո, յեվ այդ ժամանակը չպետք է աչխարող անել, վորովհետև այդ ժամանակ նրանք խնձորենու ցեցի վորդերի պես շատ թույլ են լինում և հեշտությամբ կոռորվում են թույնից։ Այդ ժամանակն սկսվում է ծաղկաթերթիկների թափվելուց անմիջապես հետո։



Ա.

Հ
Հ
Յ
Օ
-

Նկար 7. Խնձորենու պաղակերը

ա.՝ թիթեռը, բ.՝ խնձորից դուրս յեկած ու կախված վորդը, ներքեռում վորդը խնձորի մեջ նստած։

Խորանալով պտղի մեջ և վոչնչացնելով նրա սերմերը, վորդը դուրս ե գալիս և անցնում մի ուրիշ սողջ պտղի։ Այդ տեղափոխությունը մի պտղից մյուսին վորդը սովորություն ունի կատարել ուշ յերեկոյան, մութն ընկնելու ժամանակ, յեթե լով հետեւնք՝ հեշտությամբ կարող ենք տեսնել այդ բանը։ Դուրս գալով վարակված պտղի միջից, վորդը կախվում է հատուկ թերկված վրա և վարդը բերանից կառավագական է առաջանակած վարդից։



ներքին պտուղների վրա, ուր նորից կրծելով կեղեց
խորանում ե ներս:

Հասունացած վորդը նորից դուրս ե գալիս խնձորի
միջից և թելիկի վրա կախվելով իջնում զետնին: Հետո
սողալով մոտենում ե ծառին և բարձրանում խնձորենու
բնի վրա, ուր ճեղքվածներում կամ բացված կեղեցների
տակ կազմում ե հարսնյակ: Պատահում ե, վոր վորդը
հարսնյակ ե կազմում հողի վրա թափված տերեների կամ
խշուրների մեջ: Հարսնյակ կազմելը վորդն սկսում ե
հուլիսին և 2-3 շաբթից հետո հարսնյակից դուրս ե գա-
լիս թիթեռը: Բեղմավորվելով եգերը նորից ձու են ա-
ծում առողջ պտուղների վրա:

Այսպիսով թրթուռը մեր տաք շրջաններում ունե-
նում ե յերկու սերունդ, վորոնցից մեկը սկսում ե իր
հարձակումները հունիսից սկսած, իսկ յերկրորդն ողոս-
առուից: Յենթաղբվում ե, վոր լեռնային ցուրտ շրջաններում
յերկրորդ սերունդը առաջ չի գալիս և մնում ե հարսնյակ
գրության մեջ մինչև հետեւյալ գարուն, յերբ թիթեռը
դուրս գալով սկսում ե իր ավերիչ աշխատանքները:

Յերեան, Ղամարլու և մյուս մեր տաք շրջաններում
հեշտ ե տեսնել վորդը մինչև անգամ սեպտեմբերի ընթաց-
քում: Դրանք յերկրորդ սերնդի վորդերն են, վոր հարս-
նյակ կազմում են սեպտեմբերի վերջերին և այդպես
մնում մինչև գարուն:

Կոփվը խնձորենու պտղակերի գեմ պետք ե սկը-
սել գարնան, հենց վոր ծաղկման շրջանն անցնում ե և գո-
յանում են փոքրիկ պտուղները: Յեթե այդ ժամանակը
բաց թողնենք, կոփվը կղմվարանա:

Ոգտվելով այն հանգամանքից, վոր վորդի ձվից դուրս
գալը 10—15 որ ե քաշում, պտուղները զոյանալուց հե-
տո իսկույն պիտի սրսկել ծառերը փարիզան կանաչով
այնպես, ինչպես այդ առաջարկել ենք խնձորենու ցեցի:

Համար: Մեան թե սրսկումը աետ ի կրկնել ամեն 10—
12 որ մեկ անգամ, վորովհետեւ ինչպես տեսանք, վոր-
դը սովորություն ունի մի պտուղ փշացներուց հետո
անցնել նոր առողջ պտղի վրա և թունավորված խնձորի
կեղեց կրծելով՝ կսատկի:

Վորովհետեւ վորդնած պտուղները ծառից թափվում
են և վորդը պտղից դուրս գտլով բարձրանում ե ծառը
ու փշացնում առողջ պտուղները, այդ պատճառով այգե-
տերն իր համար պիտի սովորություն գարձնի յերեկոները
և առավոտները ծառերի տակից ժողովել բոլոր թափված
խնձորները և կամ իսկույն վոչնչացնել, կամ լցնել ջրով
լիրը ամանի մեջ: Այդտեղ մի քանի ժամ պահելուց հե-
տո վորդերը կկոտորվեն, իսկ խնձորը կարելի կլինի գործ
ածել:

Գարնան և աշնան ծառերի բներին կրաջուր քսելն
այս գեպքում ել լավ միջոց ե, վորովհետեւ, ինչպես տե-
սանք, վորդերը հարսնյակ կազմելու համար ընտրում
են բնի ճեղքվածքները: Մաքրելով և կիր քսելով ծառի
բունը, մենք կղրկենք վորդին ծառի վրա հարսնյակ կազմե-
լու հնարավորությունից, կամ կսպանենք, յեթե կազմած ե:


Բավկան լավ միջոց ե և գոտիներ կապելու ձեր:
Հարսնյակ կազմելու շրջանը դեռ չակսված ծառի բնի վրա
մի արշին բարձրությամբ ծղոտից հաստ ողակներ են չի-
նում և կապում բնի շուրջը ինչքան կարելի յե ամուռ:
Վորդերը ժողովվում են բնի այդ մասում և ծղոտի ա-
րանքներում հարսնյակ են կազմում: Այդեղործը հետե-
գում ե այդ գոտիներին և յերբ բավկամանաչափ հարս-
նյակներ են լինում կազմված, ժողովվում ե և այրում ու
նորից գոտիներ կապում նոր ծղոտից: Գոտիները պետք
ե շինել չ—3 վերշող լայնությամբ, և ողակած ամրաց-
նել բնի վրա թելով: (Տես նկ. 8)



Նկար 8. Ծղուե ողակներ վորզեր վարածու համար


4. ԿԵՆԵՎԱԿԵՐՆԵՐԸ

Այս վնասատուն փոքրիկ բղեգ (բողոք) է, ընդամենը 3 միլիմետր յերկարությամբ, ոև կամ շագանակի գույն ունի: Ունի շատ փոքրիկ զլուխ, փորի վրա տեղավորված են մազմզու ծնոտները, փորոնք ծառայում են նրան կրծելու համար: Կեղեակերները վնասում են խնձորենու, տանձենու ու այլ պտղատու ծառերի բունը և հաստ ճյուղերը: (Տես նկ. 9)



Նկար 9. Կեղեակերը խիստ մեծացրած, կողքին խոկական մեծությամբ

Քղեղի եղը, դարնանը կրծելով ծառի բնի կեղեը, անցք ե բաց անում այնտեղ և մտնելով կեղեի տակը կրծում եներսից թե կեղեը և թե փայտը, պատրաստելով այսպես կոչված մայրական անցքը: Մայրական անցքը լինում է կոր, մոտ յերկու միլիմետր լայնությամբ և քսան միլիմ: յերկարությամբ: (Տես նկ. 10) Այս մայրական անցքը բգեցը սո-



Նկար 10. Կեղեակերների անցքերը ծառի բնի վրա
ա. Մայրական անցք, բ.—թթուուային անցքեր:

փորաբար պահապատում է ծառի բնի յերկարությամբ և կրծած փալտի թեփը դուրս և տալիս կեղեի մեջ բացած փոքրիկ ծակից: Շատերը յերկի ահսած կլինեն մեծ մասամբ հնացած ծառերի կեղեի վրա բազմաթիվ ծակոտիներ: Կարծես մեկը մեխով դիտմածք ծակոտած լինի բունը: Ցեվ յեթե փորձենք վորկե սուր դանակով կեղեը այդ

մասում քերել, կրացենք վերև հիշած մալրական զլխագոր անցքը և կտևմաք, վոր նրա կողքերից սկսում են մի շարք ուրիշ ավելի նեղ անցքեր զլխավոր անցքի յիշեկու կողմից, վորոնք տարածվում են արդեն ծառի բնի կամ ճյուղի լայնությամբ։ Այս յերկրորդական անցքերը, վորոնց թիվը մի տեղ լինում է Հ0-30 հատ, արդեն բգեղի թրթուռներն են պատրաստում։ Կեղևակերի եղը իր գլխավոր անցքը պատրաստելուց հետո անցքի 2 կողմից փոքրիկ փոսեր ե շինում և ամեն մի փոսում ածում ե մեկ ձու, վորոնցից մի առ ժամանակից հետո դուրս են գալիս փոքրիկ թթվուռները և կրծելով կեղեն ու փայտը, պատրաստում են իրենց համար անցքեր։ (աես նկ. 10-ը.)։ Այդ անցքերը սկզբում ուղիղ են լինում, իսկ հետո թեքվում են այս ու այն կողմ և ունենում են մոտ 6 սանտիմետր յերկարություն։ Անցքը պատրաստելով, վորդը կերակրում ե կրծած կեղելով և փայտով և մինչև աշուն հասունանալով՝ անցքի ծայրը լայնացնում ե և այդ լայնացած մասում հարսնյակ (կոկոն) կազմում։ Յերկու շաբթից հետո կոկոններից դուրս են գալիս նոր բգեցներ, վորոնք մի քանի որ մնալով բնի մեջ՝ ծակում են կեղել և դուրս են գալիս հետեյալ գարնանից նորից ծառերի վրա հարձակվելու և բազմանալու համար։

Կեղևակերները մեծ վնաս են հասցնում ծառերին, վոչչացնելով նրանց կեղենները և կրծելով փայտը։ Մրանք սպորաբար հարձակվում են բույացած, հնացած, չոր ճյուղեր ունեցող ծառերի վրա։

Պաղատու այգիներում և անտառներում կատարվում են մեծ ավերածություններ, յեթե նախազգուշացման միջոցներ ձեռք չեն առնվում։

Մի անգամ վարակելով ծառը, բժշկելն արդեն շատ

դժվար ե լինում, ուստի այգետերը պիտի չափազանց ուշագիր լինեն, մանավանդ ինձորենիների, տանձենիների և գամբուլենիների վերաբերմամբ, վորոնց վրա ամենից հեշտությամբ են բնակվում նրանք։

Կեղևակերների գեմ կովել պետք ե հետեյալ ձեռվ։ Վաղ գարնան, մինչև վ ծառերը կանաչելը այգետերը պետք ե ուշի ուշով զննի այգու բոլոր ծառերը և կտրտի բոլոր չորացած կամ թռվացած ճյուղերը, իսկ կտրած տեղը պետք ե կավ քսի։

Պաղատու այգում չպետք ե արածացնել կենդանիներին, վորովինետև նրանք ջարդում են ճյուղերը, վիրավորում են ծառերի բները և այդպիսով կեղևակերների համար բնակվելու հարմար տեղեր են պատրաստում։

Չորացած, կամ պառաված ու քույլ ծառերը լավ է բոլորովին արմատից հանել և վայգուց հեռացնել, վորովինետև կեղևակերը բնակություն ե հաստատում ամենից առաջ այդպիսի ծառերի և թափված ճյուղերի վրա։


Յեթե ծառը լավը ե և վարակվել ե արդեն կեղևակերով, այդ գեպօնմ բնի և վարակված ճյուղերի վրայից այգու սուր դանակով պետք ե հանել կեղել այնպես, վոր կեղեկի մի բարակ շերտ մնա բնի վրա և ապա կավից թանձը շաղախ պատրաստել ու լավ բնել կեղեկից մաքրած մասերը։ Նույնը պետք ե անել և աշնան ու հետեւյալ գարնան ընթացքում, վորից հետո 2 տարվա ընթացքում ծառի վրա նոր կեղեկ կգոյանա։ Այն ծառերը, վորոնց վրա կեղևակերը քիչ ե ատարածվել, պիտի մաքրել կեղեկից միայն վարակված մասերը և նորից կավից պատրաստած շաղախ քսել։

Սոհասացակ ոյցետերը պետք ե զգուշանա կեղևակերի տարածումից և բոլոր միջոցները ձեռք առնի նրանց զարգացման առաջն առնելու։

Այդ միջոցներից ամենագլխավորը՝ ծառը փարթամ և առողջ պահելն ե ուրեմն հարկավոր և ծառի տակը միշտ վորած պահել և պարարտացնել, փեյնել

5. ՏԱՐԱԶՈՒՅԹ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾ

Այս թրթուռը՝ տարածված ե լինում մեծ մասամբ անտառներում, բայց պատահում ե և պտղատու այգիներում։ Պատահում են տարիներ, վոր չափազանց բազմանալով, սրանք մեծ քանակությամբ հարձակվում են այգիների վրա և ահագին ավերածություններ կատարում։ Մեր այգիներում խնձորենիների և մյուս ծառերի վրա հատ ու կենդ պատահում են ամեն տեղ և ամեն տարի։ Թիթեռի վորձը 30 միլիմետր մեծություն ունի և սպիտակավուն գույնի յե (տես նկ. 11-ա), իսկ եզր ափելի մեծ ե լինում՝ մոտ 50 միլիմետր յերկարությամբ, թերեք մուզ կարմրավուն են ու բծերավ (տես նկ. 11-բ) Յերկու սեռի այդ տարբերության համար ե, վոր այս մետաքսագործը կոչվում ե «տարագույդ»



Նկար 11. Տարագույդ մետաքսագործ

ա.՝ Թիթեռի վորձը, բ.՝ Թիթեռի եզր, գ.՝ վորդը կամ թրթուռը, դ.՝ ձվերը մազերով ծածկված, ե.՝ հարսնյակ կամ կոկոն։

Թրթուռը բավական մեծ է, շերամի վորդից մի քիչ փոքր, մոխրագույն է, բազմաթիվ փալուն կետերով և բծերով։ Մեջքի վրա յերեք սևավուն գծեր կան մարմնի ամբողջ յերկարությամբ։ Մարմնի առեն մի մասնիկի վրա վերեկց կարելի յե տեսնել մի-մի զույգ կապտավուն և մազոտ բշտիկ։ Իսկ յետերի մասում զույգի մազերը բավական յերկար են, զլուխը մեծ և մարմնին դիպչելիս թրթուռը դեղնավուն հեղուկ և արձակում, վորը քոր և առաջացնում։

Շատերն իրենց այգիների ծառերի վրա տեսած կլինեն այս վորդերին, բայց քիչ են ուշագրություն դարձել, անվաս համարելով նրանց։ Բայց դա ինարկե սխալ է, վորովինետև այս թրթուռը մեծ ազահությամբ ուսում ե ծառերի տերեները և յեթե շատանում ե՝ կարճ ժամանակում ծառերը բոլորովին մերկացնում ե տերեներից։

Թիթեռները յերեսում են հուլիսին։ Եզրը դանդաղաց են լինում և մեծ մասամբ նստած են լինում ծառերի ճյուղերի կամ բների վրա, մինչդեռ արուները (վորձերը) ընդհակառակը շատ ժիր են, շարունակ թըռչություն ունեն, ցերեկները վինտուելով եզրերին։ Բեղմնավորվելով կոտում են, ցերեկները վինտուելով եզրերին։ Վեղմնավորվելով եզրերը ձու յեն ածում բնի վրա և ձվերը ծածկում են իրենց մազերից հյուսված ծածկոցով։ Մեկ եզը են իրենց մազերից հյուսված ծածկոցով։ Մեկ եզը ածել մոտ 400—500 ձու, այդ պատճակով ել շատ շատով բազմանում են նըրանք։ Բայց հուլիսին ածած ձվերից վորդերը գուրս են զալիս հետեւյալ զարնանը հենց վոր ծառը կանաչում և և տարածվելով ծառի վրա՝ սկսում են ազահությամբ լավիել թե տերեները և թե բողբոջները։ Վոչնչացնելով մի ծառի տերեները նըրանք խմբերով անցնում են յերկրորդին, ծառի տերեները նըրանք խմբերով անցնում են և հունիսի վերջեւերը ինիսին, մինչև վոր հասունանում են և հունիսի վերջեւերին շերամի նման կոկոն են կազմում ծառերի կեղեների

բացվածքներում ցանկապատերի մեջ և այլն: Կոկոնը լինում է հյուսված թույլ և սևավուն եւ: Հուլիսին նորից դուրս են գալիս թիթեռները և տարածվում այդիներում:

Տարագույգ մետաքսագործը ահազին վնասներ եւ հասցնում այգեգոծության և անտառներին: Յեղել են տարիներ, յերբ նրանք չափազանց բազմանալով վոչնչացրել են բերքը և տերևները հազարավոր դեսյատին ա.արածության վրա:

Թրթուռը առաջանալու դեպքում պետք եւ ծառերը առանց հետաձգելու սրսկել փարիզյան կանաչով, վերցնելով ամեն մի վեղբո ջրին 4 մսխալ փարիզյան կանաչ: Սրսկումը պետք եւ կատարել ինչքան հնարավոր եւ լավ, թրջելով բոլոր տերևները:

Հուլիսի վերջերից սկսած պիտի լավ նայել ծառերը և ժողովել կամ ջարդել ձվերը, վորոնք հեշտ և գտնել ծառերի վրա, վորովհետև եգերը լինչպես տեսանք ձվերն ածում են բների վրա մարդաբոյ բարձրությամբ:




Նկատի պետք եւ ունենալ այն հանգամանքը, վորթուռները մեկ ծառից մյուսը տեղափոխվելու համար իշնում են և գետնի վրա սողալով բարձրանում նոր ծառեր: Այդ տեղափոխությանը խանգարելու համար հուլիսին ծառերի բների վրա ամրացնում են 3-4 վերշոկ լայնությամբ թղթե ողակաձեւ գոտիներ վորոնց վրա քսում են մազութ, կամ կուպը:

Կան նաև հատուկ դեղեր այդ նպատակի համար, բայց նրանք գժվար եւ այժմ ձեռք բերել: Կուպը ամենից հարմարն եւ հեշտ եւ ճարվում: Թրթուռներն այդպիսի գոտիների հանդիպելով չեն կարողանում նրանց վրայով անցնել ու խորբած են գոտու շուրջը բնի վրա: Շրջելով այդին կարելի յե թրթուռները ժողովել և վոչնչացնել:

6. ՈՂԱԿԱՎՈՐ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾ

Այս թրթուռը նման եւ տարագույգ մետաքսագործին, նույնքան շատակեր եւ և վնասատու: Թրթուռը յերկար մազեր ունի, կապտավուն եւ մեջքի վրա ունի կարմրավուն մի քանի գծեր: Թիթեռը փոքր եւ, 3 սանտիմետր յերկարություն ունի, մութ կարմրավուն գույն ունի: Թեփերի վրա լստ լայնության յերկու գծեր են անցնում, վորոնց արանքի շերտը ավելի մուգ եւ, քան թեփերի մյուս մասերը:



Նկար 13. Ողակավոր մետաքսագործ
ա.՝ թրթուռը կամ վորդը, բ.՝ թիթեռը, գ.՝ ձվերը:
Այս մնասատուն ավելի յէ տարածված և ամեն տեղ

կարելի յե գտնել: Թիթեռները յերեան են դալիս նորից հունիսի վերջերին և կոկոնից դուրս դալով մի շաբաթ հետո ձու են ածում, ընտրելով դրա համար ծառերի բարակչ մեկ տարեկան ճյուղերը, Զվերը ածում են ողակածե կանոնավոր շարքերով, (տես նկար 13) դրա համար ել ողակավոր մետաքսագործ անունն են կրում: Զվերի ողակը շատ ամուր ե լինում, վորովհետեւ եզը հատուկ հեղուկ նրանց ամբացնում ե ճյուղին: Այդպես ձվերը մեռմ են մինչև հետեւյալ գարուն: Դուրս դալով ձվերից թրթուաները ապրում են խմբերով և ցերեկները անշարժ են լինում: Այդ հանգամանքը շատերին կարծել ե տալիս թե նրանք այնքան ել վնասակար չեն, բայց դա նիշտ չե, վորովինելով վորդերը իրենց գործը կատարում են գիւերները, լափելով տերեները և մերկացնելով ծառերը: Հասունանալով նրանք ցրվում են և կոկոններ կազմում բների կեղեների ճեղքածներում, ցանկալատերում և այլն:

Վոչնչացնելով տերեները նրանք մեծ վնասներ են տալիս այզեղործության: տերեների հետ միասին վոչնչացնում են և բողբոջները և այդպիսով ֆչանում են այն պտղատու բողբոջները, վորոնք գոյանալով նախորդ տարին՝ պիտի պտուղ տան հետեւյալ տարում: Այսպիսով թե ողակավոր, թե տարագույգ մետաքսագործները և թե բոլոր տեսակի վնասատուները, վորոնք վոչնչացնում են տերեները՝ մեծ չափերով պակասեցնում են ծառերի պտղաբերությունը:

Կովի միջոցները նույնն են, ինչ վոր տարագույգ մետաքսագործի դեմ: Տարբերությունը նրանում ե, վոր սրանց ձվերը ժողովելը պիտի թողնել աշնան կամ ձմրան սկզբներին, յերբ ծառերից տերեները թափում են: Այդ ժամանակ պարզ կարելի յե տեսնել նրանց ձվերի ողակները բարակ ճյուղերի ծայրերին և ժողովել ու վաչնչացնել:

Հաճախ ողակով մետաքսագործը իր ձվերը ածում ե տերեների կոթերի վրա: Պարզ ե, վոր աշնան տերեաթափից հետո ընկած տերեների հետ լինում են և նրանց ձվերը, ուստի չի կարելի այգում թափված տերեները թողնել: Հարկավոր ե ժողովել և կաղմել տերեներից կույտեր ու վառել:

7. ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԱՅԳՈՒՄ

Վաղ գարնանից, մինչև իսկ ավելի շուտ, յերբ ձյունը դեռ չի հալվել և ծառերը դեռ ձմրան քնի մեջ են գտնվում, այգետերը պիտի ոկսի իր աշխատնքներն այգում: Նա պետք ե նկատի ունենա, վոր իր մղած կոփվը վնասատուների դեմ սկսավետ ե և այն ծախքերը, վոր պիտի անսի տարվա ընթացքում կծածկվեն այգու կատարյալ բերքով: Զե վոր վերջ ի վերջո յեթե այս տարի կոփվ չե մղվել վնասատուների դեմ և այգու ծառերի տերեներն ու բողբոջները կերպած են և վոչնչացված վնասատուներից, նշանակում ե, թե մյուս տարի այգու բերքը պիտի պակաս լինի: Բավական չե այդ. դա նշանակում ե, վոր մյուս տարի վնասատուների թիվը ավելի շատ պիտի լինի և կոփման ել ավելի գժվար:

Այս ճշմարտությունը պետք ե գիտակցեն ամենքը և կովեն վնասատուների դեմ բոլոր այգիներում: Հակառակ դեպքում, յեթե մեկը կոփվ մղում ե իր այգուս ամենայն կանոնավորությամբ, իսկ նրա հարեանը անուշադիր ե դեպի իր այգին, նշանակում ե, վոր վնասատուները դեռ կան և կարող են հարեանի այգուց անցնել և վնասել այն այգին, վորի տերը կանոնավոր կոփվ ե մղել իր այգում: Բայց չնայած դրան, շատերը կովելով իրենց այգիներում վնասատուների դեմ մեծ հետեանքներ են ստացին: Ուրեմն հարկավոր ե, վոր բոլոր այգետերերը բժշկին

երենց այդիները և, չսպասելով հարեվանին, կատարեն հետեւալ աշխատանքները:

Փետրվար և մարտ ամիսներում կոիվը պետք ե կայանա հետեւալում. այդիտերը պիտի մեկ առ մեկ ուշադրությամբ նայի բոլոր ծառերը, մարբի այս ճյուղերը, վորոնց վրա աշխանից տերևներ են մնացել, կտրտի կոտրված, վիրավորված և չորացած բոլոր ճյուղերը, մաքրի ցեցերի թողած բները, ծառերի բների վրա գոյացած ձեղքածքները, իսկ մարտի վերջերին կրաշաղախ քսի ծառերի բներն ու հաստ ճյուղերը:

Ապրիլի ընթագրում, յերբ ծառերն սկսում են կենդանանալ և բողբջներ արձակել, չսպասելով ծաղկման պետք ե սրսկել խնձորենիները փարիզյան կանաչով. վերցնելով ամեն մի վեդրոյժն (ՅՈ Փունդ Ջրին) 2-3 մսխալ փարիզյան կանաչ. Յերկրորդ սրսկումը ավելի ուժեղ դեղով պիտի կատարել ապրիլի վերջերին, յերբ ծաղիկները կթափվեն. Այդ ձեռվ մենք կոված կլինենք թե իշնձորենու ցեցի և թե պտղակերի դեմ. Ծաղկման ժամանակը դեռ չսկսված, յերբ նոր են առաջացել ծաղիկների կոկնները՝ պիտի սրսկել կրաշաղախով ինչքան կարելի յելավ, վորպեսզի կոկնները ծածկվեն կրաջրով և խնձորենու ծաղկակերը չկարողանա կրծել կոկնները ձվեր դընելու համար:

Մայիսի սկզբից նորից պետք ե ծառերը սրսկել փարիզյան կանաչով պտղակերների դեմ և կապել բների վըրա գոտիներ. Այս սրսկումը ուղղված կլինի նաև տարագույգ և ողակավոր մետաքստգործների դեմ, վորոնց թրթուները սկսում են վոչնչացնել տերեները. Մայիսի սկզբից պետք ե անպայման փորել այգին բաներով յեթե վոչ ամբողջությամբ, գոնե ծառերի տակերը. Այսպիսով կոչնչանան այգու մոլախոտերը, ուր թագնիում են սովորաբար վասատուներից շատերը. Մայիսի յերկորդ

կիսում պետք ե նորից սրսկել ծառերը փարիզյան կանաչով. Պետք ե զննել ծառերի բների և ճյուղերի կեղևները թե չկան պարզելու թե չկան արդյոք կեղևակերներ և յեթե կան անմիջապես անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել նրանց դեմ:

Հունիսի և հուլիսի ընթացքում պիտի ժողովել խընձորենու տակ թափված վորդնած պտուղները և վոչնչացնել նրանց ամեն առավու և յերեկո, վրապեսզի ընկած խնձորների մեջից պտղակերի վորդը նորից չբարձրանա ծառը և չփացնի առողջ պտուղները. Պետք ե 1-2 անգամ ևս սրսկել ծառերը փարիզյան կանաչով. Հետեւ ծառերի բներին կապած ծղոտի և կուպրի գոտիներին և նրանց տակ ժողովված վորդերը հավաքել ու վոչնչացնել: Յեթե խնձորենու ցեցի բներ մնացել են, ժողովել նրանց ձեռքով կամ այրել ճրագներով:

Ոգոստոսին մեր մի քանի շրջաններում սկսում են նորից զարգանալ պտղակերները. Պետք ե սրսկումներ անել փարիզյան կանաչով: Ծառերի բների գոտիները պետք ե նորոգել և շարունակել հսկողությունը թրթուների նկատմամբ: Ծառերից թափված պտուղները ժողովել և վոչնչացնել վորդնածները:

Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում պետք ե ուշաղիր լինել կեղևակերների վերաբերմամբ և վարակված բները մաքրել ու կավ քսել: Ծառերի բները պիտի մաքրել և կրաշաղախ քսել: Հոկտեմբերի ընթացքում պետք ե փորել այգին, կամ ծառերի տակը 3-4 արշին լայնությամբ բահերով: Այդպիսով վասատուներից շատերը, վոր ձմեռում են հողի մեջ, կամ խոտերի արանքներում կոչնչանան շղիմանալով ձմբան ցրտերին:

Նոյեմբերին յեթե հնարավոր և ծառերի չորերը պիտի կտրել, վիրավոր տեղերը կավ քսել և ժողովելով թափ-

ված տերեները կույտեր կազմել ու վառել, իսկ չորեքը
այդուց դուրս հանել ու դարձյալ վառել:


Այս կարգով իր այգում աշխատանքներ կատարող
այգետերը կունենա որինակելի այգի և միշտ տուատ
բերք կունենա իր ծառելից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Խնձորենու վնասատուները	3
1. Խնձորենու ցեցը կամ թթուոը	5
2. Խնձորենու ծաղկակերը	11
3. Խնձորենու պտղակերը	15
4. Կեղեակերները	20
5. Տարագույգ մետաքսագործ	24
6. Ողակավոր մետաքսագործ	27
7. Ցերը և ինչ բժշկական աշխատանք պետք է կատարել այգում	27

ՎՐԻՊԱԿ. — 1-ին դիմում տպագրված և «Խնձորենու ցեցը
և թթուոը», պետք է կարդալ՝ «Խնձորենու ցեցը և թթուոը»:



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ՄԱՃԿԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-
ՍԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔՈՒՅՑՆԵՐԸ

1. Խ. Յերիցյան — ինչպիսի սերմացու պիտի ցանել (աղառված):
 2. Բամբակի և կաղամբի վնասատուները Գինն և 12 կ. չերվ:
 3. Ն. Ն. Բոգդանով — ընտանի կենդանիների քոսը
Գինն և 12 կ. չերվ:
 4. Գ. Գրձելյան — բամբակի չոռ հիվանդությունը
Գինն և 12 կ. չերվ:
 5. Պ. Ն. Սոկովնին — ինչպիս պետք է կռվել չորության դեմ
անջրդի հողերում — Գինն և 15 կ. չերվ:
 6. Պրոփ. Պ. Կոստիչն. — ինչ կա հողի մեջ և ինչպիսի հողեր են
լինում — Գինն և 10 կ. չերվ:
 7. Իս. տեր — Ներսիսյան. Խնձորենու վնասատուները և նրանց
դեմ կռվելու միջոցները — Գինն և 12 կ. չերվ:
- Դիմել՝ «Մաճկալի» խմբագրության, կամ Հ. Ա. Ա.
Ա. Կոմիտեյի հրաժարակշուրյան, Յեւելան,

«Ազգային գրադարան



18107



ԱՐԴՅՈՒՆ



632.7
S - 48